ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄ ՊԲՀ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԿԱՐԾԻՔԻ ԱՌԹԻՎ

«Պատմաբանասիրական հանդեսի» 2011-ի 2-րդ համարում հրապարակվել է հանդեսի գլխավոր խմբագրի կարծիքը ամերիկացի էպոսագետ Էրլ Անդերսոնի գրախոսության մասին (տպագրված Բոստոնի «Armenian Review» պարբերականում): Գրախոսությունը վերաբերում է իմ «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան» գրքին, որն անգլերեն թարգմանությամբ լույս է տեսել է ԱՄՆ-ում 2008 թ.: Քանի որ Ս. Հարությունյանը գրախոսության կապակցությամբ գնահատականներ է տալիս իմ գրքին, անհրաժեշտ եմ համարում որոշ ճշգրտումներ անել:

Նախ, «ՊԲՀ-ի գլխավոր խմբագրի կարծիքի» երկրորդ կետի առթիվ: Ս. Հարությունյանն ասում է. «Մի ներքին հիացում է զգացվում Ա. Եղիազարյանի կարծիքի նկատմամբ, որ իբր թե «Սասնա ծռերը» ձևավորվել է արաբական տիրապետության IX–XI դարերի իրադարձությունների ազդեցությամբ»: Թողենք թող «ներքին հիացումի» համար պատասխան տա Անդերսոնը: Ի՞նչ է գրում Ա. Եղիազարյանը: Նա գրում է VIII–XII դարերի մասին (տե՛ս «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Երևան, 1999, 3–4-րդ և այլ էջերը): Ս. Հարությունյանի խոսքերից հետևում է, որ իմ գրքում միայն IX–XI դարերի մասին է խոսվում: Այդպես չէ, թեև, ինչպես երևում է գրքի վերնագրից, ես ամենևին խնդիր չեմ դրել տալ արաբական տիրապետության շրջանի մանրամասն բնութագիրը: Ես ընդամենը պետք է հաստատեի, այո, Մ. Աբեղյանի կարծիքը էպոսի և հակաարաբական պայքարի կապի մասին: Բայց Ս. Հարությունյանը ինձ հանդիմանում է VIII–XIII դդ. մի շարք իրողություններ «զանց առնելու» կամ «հաշվի չառնելու» համար:

Այս կետին հաջորդում է հետևյալ բացատրությունը. «Պատճառն այն է, որ Ա. Եղիազարյանը ճիշտ չի ըմբռնել «Սասնա ծռերի» բուն ժանրային նկարագիրը: Մեր անձնական զրույցների ժամանակ նա քանիցս շեշտել է, որ «Սասնա ծռերը» միջնադարյան էպոս է»: Փորձեմ այս բոլորը մի տրամաբանական շղթայի բերել: Ես VII–XIII դդ. իրադարձությունները հաշվի չեմ առել, որովհետև սխալ եմ ըմբռնել էպոսի ժանրային նկարագիրը և դա համարել եմ միջնադարյան էպոս: Նախ, ի՞նչ կապ ունի էպոսի ժանրային նկարագիրը այս կամ այն իրադարձությունը զանց առնել-չառնելու հետ: Ապա, նշված դարերը հենց միջնադար են, և եթե ես «հաշվի առնեի» դրանք, դրանով պետք է ավելի ամրապնդվեր էպոսի միջնադարյան լինելու դրույթը: Բայց Ս. Հարությունյանն արդեն իր վճիռը կայացրել է՝ Ա. Եղիազարյանի գլխավոր մեղքը մեր էպոսը միջնադարյան համարելն է և կարծիքը Ս. Հարությունյանի ցուցումներով չփոխելը: Պետք է ենթադրել, որ ճիշտ ըմբռնումը Ս. Հարությունյանինն է, այլապես նրա վճիռը այդքան կտրուկ չէր լինի: Բայց գիտությունը վճիռներ չի ընդունում:

Հիմա տեսնենք Ս. Հարությունյանի փաստարկները: Գրում է, որ էպոսը «հորինվել է երեք հնավանդ առասպելների հիմքի վրա»: Հիշեցնում է, որ իր ասպիրանտը «իր ցուցումներով» հետազոտել է այդ առասպելներից մեկը: Լավ է արել, որ հետևել է իր ղեկավարի ցուցումներին և հետազոտել երկվորյակների առասպելը: Էպոսի մեջ ներառված բոլոր առասպելների հետազոտությունը օգտակար է և անհրաժեշտ գիտությանը: Ես այդ մասին գրել եմ գրքում (տե՛ս էջ 9) և ասել իմ այլ ելույթներում: Բայց ինչպե՞ս է այստեղից հետևցրել, որ ես ճիշտ չեմ ըմբռնել մեր էպոսի «բուն ժանրային նկարագիրը»:

Ես գրել եմ և հիմա էլ համոզված եմ, որ «Սասնա ծռերը» ձևավորվել է միջնադարում: Ոչ թե ստեղծվել *է, այլ* ձևավորվել*: Այսինքն, ես ոչ մի կերպ չեմ ժխտել հնավանդ առասպելների նշանակությունը: Պարզապես ես դրանք մանրամասն քննության չեմ ենթարկել: Իմ գրքի խնդիրն այլ է եղել, և այդ մասին ես հստակ գրել եմ ներածության մեջ: Բայց երևի պետք է հիշել, որ «Սասնա ծռերի» մեջ պարզ զգացվում է հակաարաբական պայքարի որոշիչ ազդեցությունը և միջնադարյան աշխարհզգացողության արտացոլումը: Հնավանդ առասպելները էպոս են մտել դրանց բովով անցնելուց հետո:*

*Ի՞նչ է ասում մեր մեծագույն էպոսագետն ու բանագետը՝ Մանուկ Աբեղյանը: Նա վեպը հստակորեն կապում է միջնադարի (VIII–XIII դդ.) հետ, դա համարում «նոր վեպ»՝ տարբերելով հնից (տե՛ս, օրինակ, «*Հին *վեպի ուրիշ մնացորդներ* նոր *վեպի մեջ» ենթագլուխը, էջ 395, Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966: Ընդգծումները իմն են –* Ա. Ե.*): Այսինքն, ձևավորման ժամանակով էպոսը միջնադարյան է: Ի՞նչ է ժանրային հատկանիշներով: Անշուշտ, ոչ հնադարյան (արխաիկ) էպոս: Հինը արդեն ունեցել ենք, ինչպես հավաստում են Աբեղյանը և ուրիշներ՝ հենվելով նախ և առաջ Խորենացու վրա: Նորը չէր կարող լինել հնի կրկնությունը: Նա կարող էր լինել միայն միջնադարյան էպոս: Գրքում ես առաջ եմ քաշել մի ամբողջ շարք փաստարկներ, որ «Սասնա ծռերը» միջնադարյան վեպ է: Այդ բոլորը հնարավոր չէ այստեղ կրկնել: Եվ կարիք էլ չկա: Զարմանալին այն է, որ Ս. Հարությունյանը այդ փաստարկներին չի էլ անդրադառնում: Գոնե մեկը քններ, հերքեր:*

Ս. Հարությունյանը, պատմելով էպոսի առասպելական հիմքերի մասին, ի վերջո, այնպես էլ չի ասում, թե ո՞րն է էպոսի՝ իմ չհասկացած բուն ժանրային նկարագիրը: Ընդվզելով «միջնադարյան» բնութագրի դեմ՝ նա երևի պետք է տար ի՛ր բնութագիրը: Բայց այդպիսի բան նրա կարծիքում, ինչպես և հետազոտություններում, չեք գտնի:

Պետք չէր, իբրև մեղադրանք, ասել, որ «Սասնա ծռերը» միջնադարյան էպոս համարելու վարկածը ռուսալեզու հետազոտությունների ազդեցությունն է»: Դա որևէ բան չի ապացուցում: Մանավանդ որ դրանից մի քանի տող վերև ինքն էլ հենվում է ռուս առասպելաբանների հեղինակությանը:

Տեղի սղության պատճառով բավարարվում եմ այսքանով:

Չեմ կարող երկու խոսք չասել խնդրի էթիկական կողմի մասին: Ես ՊԲՀ-ի խմբագրական խորհրդի անդամ եմ: Սրանից հետևում է, որ մինչև տպագրվելը ես պետք է ծանոթանայի դրան և իմ վերաբերմունքի մասին

գոնե տեղյակ պահեի խմբագրական խորհրդին: Բայց ոչ ոք ինձ չի ասել խմբագրի կարծիքի մասին: Դա ես կարդացել եմ միայն համարը տպագրվելուց հետո: Պ. Հարությունյանը պարզապես օգտագործել է գլխավոր խմբագրի իր իրավունքները, խոսքն էլ վերնագրելով «Գլխավոր խմբագրի կարծիքը», այսինքն, դրան պաշտոնական բնույթ տալով, թեև դա ընդամենը մի մասնագետի կարծիքն է մի այլ մասնագետի գրքի մասին:

ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ի պատասխան սույն նամակի՝ հանդեսի գլխավոր խմբագիր Ս. Հարությունյանը հայտնում է, որ ինքը մնում է իր կարծիքին և ավելորդ համարում նամակագրի հետ որևէ անիմաստ բանավեճի վարումը առհասարակ:

(Խմբ.)